



51. ՊՈՂՈՍ, ՊԵՏՐՈՍ

Կէղի ու չէղի Պողոսն ու Պետրոս մի կէղի: Պողոս ճոչ ախպերն ա, Պետրոսն էլ պղզտիկ ախպերն ա:

Պողոս պըսակված ա, Պետրոսն էլ ազձր ա: Պետրոսն էլ շատ աղեկ խաղցըվոր կէղի: Էրկուսն էլ փայլեվան են: Ըսկի թու մեկ մարթ ըտոնց հնախթող չէղեր ա:

Էն մեկ օր ուրանց ազիզ օր կէղի, կերթան օդեն, կը խաղան, Պետրոս շատ աղեկ խաղցըվոր ա:

Պետրոսն օր կը խաղա, կը տեսին, օր աշըղ մի կը մըտի ներս:

Պողոս աշըղին կասա. - Աշըղ, դու աշխարի շատ ես պըտտոտեր ես, իմ ախպեր Պետրոսի պես մեկ խաղցըվոր մի դու տեսե՞ր ես:

Աշըղ կասա. - Հա՛, տեսեր եմ մեկ:

Կասա. - Դո՞ր ես տես:

Կասա. - Հընդկաստան, Գեորգ Բեկի ախչիկ Շամամ:

- Աշըղ, - կասա, - դու վըր իմ գըլխուն էկար: Ես պըտի էրթամ, էնի ուզեմ, կպերեմ մի ախպեր Պետրոսին:

Էլան, ուրանց պատրաստութեն տեսան մեկ քանի օր ու էլան, քնացին Հընդկաստան: Քնացին Գեորգ Բեկի տուն խարցուցին, քնացին, գտան:

Գեորգ Բեկն աչքեց, օր քսան խատ ծիավոր էկան, ամեն էլ սերսուփ խարսընքի շորեռով խազված:

Ասաց. - Էսոնք խարսընքվոր են, տեսե՛ք, դո՞ր կերթան:

Գացին տեմ, Գեորգ Բեկի տուռն իճան: Գեորգ Բեկն էլավ, էտոնք ամեն իճուց, տարավ օղեն, պատվով էտոնց նըստեցուց, էտոնց օրենքն էլ էմալ ա, օր կղունխին պըտի իրեք օր պան չը-խարցուն: Իրեք օրեն ետ նորեն պըտի խարցուն, տեսին էնոնց խըզմաթ ի՞նչ ա:

Իրեք օրն օր քըմավ, Գեորգ Բեկն էկավ, ասաց. - Պարեկըն-նե՛ր, խարցուցել ամոթ չէ, դո՞ր եք էկեր եք, դո՞ր կերթաք: Չեր խըզմաթն ի՞նչ ա:

Պողոսն ասաց. - Գեորգ Բեկ, դու սաղ մընաս, մեր խըզմաթ մըտ քեզի յա:

Գեորգ Բեկն ասաց. - Պարի՛, հազար պարի: Վըր իմ աչիչն էկեր եք: Ասե՛ք, օր ծիր խըզմաթ կատարեմ:

Պողոսն ասաց. - Մենք էկեր ենք մըտ քեզի պարեկմութենի, օր քու ախչիկ Շամամ, թի Աստըված կամեցեր ա, տաս իմ ախպեր Պետրոսին:

Գեորգ Բեկն ասաց. - Օր Աստըված կամեցեր ա, պըտի էղի: Ես իմնամ դու որո՞նք եք:

- Մենք Պողոս, Պետրոսն ենք:

Գեորգ Բեկն ասաց. - Էն փայլեվան Պողոս, Պետրոս կասեն, դո՞ւք եք:

Ասաց. - Խա՛, մե՛նք ենք:

Գեորգ Բեկն ասաց. - Ախչիկ մ՛ ա, թ՛առի քու ախպոր կղաղեն:

Էն տեղ Պողոսն էլավ, Գեորգ Բեկի ծեռ պաքեց, ասաց. - Խընամի՛, շնորհակալ եմ:

Ախչիկ մի գնաց, Շամամին անգըջկլա տարավ. - Շամամ, աչդ իլի՛ւս, քո խեր քեզի կը պըսակա:

Շամամ ամոթու ծեն չերաց, գըլոխ կախեց:

Գեորգ Բեկն ասաց. - Կը խընթրեմ ընծի չորս-խիւնգ օր, օր տաք, իմ ախչկե ոտ ու ծեռ տեսիմ, Աստըված ձեր պան հաճողա:

Մընացին խիւնգ օր էնտեն, ախչկե ոտ ու ծեռ տեսան, պա-կասութեն խըքացին, խըլըսուն էլան, պըտի ընգին ճամբախ:

Գեորգ Բեկն ասաց. - Ընծիկ մեկ օսաթ մի կա, ձեզիկ էնեմ, թե օր իմ ախչիկ մընաց էրեխով, օր իմ ախչկե ախչիկ էղավ, էն ախչիկ շատ խորոտ կէղի, լուսնըկի պես փայլ կու տա, թե օր տըղա էղավ, տըղեն շատ գեշ կէղի, ինչպես օր մըկան ծաք,

չուզեք գոր հուիու տեսնել, մեր ջընսի տղղեն էմալ ա: Իմ ախչիկ պըտի մեկ տարի թամամ օրեն կալիք մի սապոնով զեն տղղեն պըտի լվա, օր տարին թըմավ, են տղղեն դորուս օրըզօր անեճ կուքա, կելի ու են էլ փայլեվան կելի: Իմ օսանքն էս ա ձեզի: Իմ օսանք չըմոռնաք, իմ ախչկեն էլ էրես չի՛ տաք: Աստըված ձեր պան հանողա: էլե՛ք, ընգե՛ք ձեր ճամբան, գանցե՛ք:

Էտտեղեն էլան, կանչին ուրանց Աստըված, ընգան ճամբան, ուրախելեն էկան: Չորս-խինգ ավուր ճամբան էկան, էկան են մեկ օր սարի մեչ, չաղըրներ տրին են տեղ, ամեն օր, օր ուրանց չաղըրներ կը տնեն, էտոնց նորանոր կա, չաղըրներու պուր կը պըտտա:

Էն օր Պետրոսն ասաց. - էս օր նորանոր ես կելիմ: Քանցե՛ք հըմենքտ էլ, ձեզի ողիանք քընե՛ք:

Էն գիշեր Պետրոսն էղավ նորանոր: Օր զըմեն քընան, խախընդան, Պետրոս քընանց, մըտավ Շամամի չաղըր: Շամամի վըզի օսկիք քողցավ: Շամամ սկի խանքար չէղավ: Համա առավ օսկիքն ու ընգավ դուս: Խըլըսուն Շամամ հիմցավ, լվացվավ, ուր շորեր խաքավ, տեսավ, օր օսկիք չըկա:

Ասաց. - Վախ, վախ, էս իմ օսկիք վո՞ն գողցավ, տարավ: Ես էղա սեվերես: Ես խըլըսուն էտոնց ջույաք ի՞նչ տամ:

Շամամ էլ ձեն չէրաց, մընաց ուր մառաղի մեչ:

Խըլըսուն էլան էտ տեղեն օր ընգան ճամբան, Պետրոս էմալ ուրախութե՛ մի կենա: Շամամն ասաց մըչ ուր մըթքին. «Վալա՛, կա ու չըկա իմ օսկիք Պետրոսն ա տարեր ա: Օր էս հըմլան ուրախութեն կենա»:

Պետրոսն էկավ, տեսավ, օր Շամամ միյաք կախեր, կուլա: Պետրոսի քիզար կըտըռտավ: Համա խանեց օսկիք, եռու տեղեն Շամամին նըշանց տվեց:

Օր Շամամ տեսավ զօսկիք, ասաց. «Գոհանամ քեզնե, Աստըված, չէ՞ ուրիշ մարթ իմ օսկիք չըտարեր, ես չէղա սեվերես»:

Ուրախալեն էկան, էկան մինչև հիրիկուն էլմի սարի գըլոխն իճան, ուրանց չաղըրներ գարկին ենտեղ, կերան, խըմեցին ուրանց, հիրիկուն մուքն օր տըվեց, էղավ քընելու գան, Շամամ ուր հանեճի մարթ ճամբսից Պողոսի մոտ, ասաց. - Կը խընթեն, օր էսօր ես կելիմ նորանոր:

Պողոս հրամայեց ասաց. - Հետո պըտի նորանոր չըպը-
տոտա: Էսօր մեզի նորանոր պետք չէ:

Գանլոզ մարթուն ասաց. - Գնա՛, Շամամին ասա՛, ք՛լի ուր
քյեֆով պըտոտա: Ինչ կուզա՛, քըխ զէն էնա: Ես իմ խարսին հրա-
ման կուտամ:

Ու էկավ, Շամամին ասաց. - Քո տեքըր քեզի հրաման տվեց
պըտոտելու:

- Է՛, ախչի՛, էլ պա՛ մի չասա՞ց իմ տեքըր:

Ասաց. - Ինչ կուզա՛, քըխ զէն էնա:

Շամամն ուրախցավ, էլավ, ֆշանգըխներ քալեց ուր
վըզով, քըվանքն առավ ուր ծեռ, փուշին կապեց գըլոխ,
Դիարբաքրի շըվար խաքավ ու էլավ, ընգավ չաղըրներու պուր
պըտոտեց: Էլ մարթ էտոր չըճանչցավ: Պըտոտեց, մինչև օր հըմեն
քընան: Քնաց դեմ Պետրոսի չաղրի տուռ կայնավ: Անգաչ տրեց,
օր Պետրոս կը խռա, քյե ի՞նչ պիտի:

Հուշիկ մըտավ ներս, զէրես պանցեց, էրես թամաչա էրաց,
սիրտըն ղըհաթավ, սըհաթ ծոցեն խանեց, էցկեց ուր վիզ, էկավ
քնաց: Քնաց չաղըրներու պուր չուր լոս պըտոտեց:

Օր լուցավ, քըչ հըմեն շուտ էլավ, քնաց վացվավ, շորեր
խաքավ ու էկավ կայնավ չաղրի տուռ: Մըչ ուր մըթքին ասաց.
«Մըկա Պետրոս կու քա՛, տեսինք ի՞նչ տրության մեչ ա»:

Պետրոս էլավ, շորեր խաքավ, տեսավ ուր սըհաթ չըկա:
Վա՛խ, վա՛խ ասաց: Էսի իմ սըհաթ ես դո՞ր եմ կորիսեր եմ:

Ու էկավ ընցավ, քնաց: Շամամ տեսավ, օր գըլոխ կախեր ու
կէրթա: Շամամ էնտեղ ծըծղաց:

Մըչ ուր մըթքին ասաց. «Ի՞նչ ա, էրեկ ի՞նչ խաղցիր իմ
գըլոխ: Դե գնա՛, էսօր քեզի աղե՛կ ա: Ես էլ ղըղմլա՛ կը խաղամ
քու գըլոխ»:

Պետրոս տանրցավ, էկավ, քնաց, մտավ ուր չաղըր, ուրանց
խաց կերան, Պողոսն հրամայեց. - Էլե՛ք, պանրե՛ք, հա՛գան ա:

Էլան, էտտեղեն պանրցին ու դեպի ուրանց տուն էկան: Էկան
ուրանց տուն, յոթն օր, յոթ գիշեր խարսնիք էրեցին:

Խարսնիք վերճանալով ետ, ինն ամիս, ինը սըհաթ, ինը
դանկեն օր քըմավ, Աստըված Պետրոսին մեկ տըղա տվեց:

Քանցին Պողոսին անգըջկլա տվին, ասին. - Աջըրտ իլ՛ա, քո
խարսին տըղե մի էլավ:

Քանցին Պետրոսին էլա անգըջկլւն տվին, ասին. - Աստղված քեզի մխիթրեց ու քեզի տղոն մի տվեց:

Պետրոս կզանկ ու շուքըր տվեց Աստղծուց, ասավ. - Գոհանամ քենե, Աստղված, ինչպե՞ս շուտ ընծի մխիթարեցիր:

Էրեխի իրեք օրն օր թըմավ, Պողոս հրամայեց ասաց. - Էրեխեն իմ մոտ պերե՞ք, օր էրեխի անուն դնեմ:

Պողոս օր էրեխեն տեսավ, Պողոսի սիրտ էրեխից խառնեց, ասաց. - Չուզեմ ես էրեխեն տեսնեմ, քանի օր էրեխեն կը մանի մըկան ծանք: Ես էրեխի անուն պըտի ես դնեմ Անանուն տղա:

Գեորգ Բեկի շիրաթն օր տվեր էր, զենի մոռացեր էր: Էլ մըթքին չէկավ են խոսքըն: Տըղեն վերցին ու տարան:

Պետրոս խարցուց, ասաց. - Իմ տղի անուն ի՞նչ դրեց:

Պետրոսին ասեցին. - Դրեցին Անանուն տղա:

Պետրոսն ասաց. - Վա՛խ, վա՛խ, ես ի՞նչ ցավալի պան էր: Վանք բանքի մենք մեռանք, ես տղոն օր մընաց, մեր անուն կը կուրխի:

Պետրոս մըջ ուր մըթքին մեզեց, ասաց. «Էտր ճար ես ի՞նչ գըտիմ: Էտր ճարն են ա, տամ ուր մոր գյիրկ ու մեր խըրկեմ, էրթա ուր խոր տուն: Իմա՛լ կէղի, ք՛էղի: Օր վերջեն ես խըրղի հանեմ սեվերես չէղիմ ես պանի խամար»:

Իրեք-չորս ամիս օր թըմավ, քնաց, կընգան ասաց. - Շամամ, ես քեզի պիտի ճամբխեմ, էրթաս քո խոր տուն:

Շամամին շատ տըժար էկավ, վա՛խ, վա՛խ, ասաց: «Իմ իրիկ ես ի՞նչ այիբ ա տեսե վըր ծիկ, օր ընծի կը ճամբխե՛մ էրթամ իմ խոր տուն»:

Շամամ գիշեր-ցերեկ էլ ուրախութեն չէկավ սիրտ, կուլեր ու կը գոռեր:

Պետրոսն էլավ, քնաց Պողոսի մոտ, ասաց. - Ախպե՛ր, կը խընթրեմ, օր իզին տաս, իմ նըշանած ճամբխեմ, էրթա ժամանակ մի ուր խոր տուն:

Պանջ Պողոս Պետրոսի դարդեն խանքար չուներ:

Ասաց. - Ախպե՛ր, ինչի՞ կը ճամբխես՝ էրթա:

Ասաց. - Յինք կուզան էրթալ:

- Օր հինք կուզան էրթալ, քնա՛, էնոր պակասութեն տե՛ս, քանի՛մ մարթ տի՛ր խետ, թը տանեն ուր խոր թասլիմ էնեն ու գան:

Պետրոսն էր էլավ, էտոր պակասութեն տեսավ, մեկ տաս
մարթըմ գտավ, տրեց կընգան խետ, ասաց. - Տանիք, ուր խոր
թասլիմ ենեք ու գնաք:

էլան, ընգան ճամբախ, առան Շամամին, գացին: Երկու
ավուր ճամբախ օր գացին, են մեկ հիրիկուն Շամամ մըջ ուր մըթ-
քին մտածեց, ասաց. «Ընծի օր տարան. իմ խոր թասլիմ էրեցին,
իմ խեր պըտի ասա՝ հալքաթ իմ ախչիկ անդաբսըզութե մի էրեր ա,
օր ճամբխեցին, էկավ: Ապա աղեկն են ա, օր ես գիշերով էլիմ,
առիմ իմ տըղեն ու փախիմ, էրթամ, էտոնց վերեն կուրիսիմ: Թըխ
գյելեր ընծի ուտեն, քըջ իմ խոր տուն էրթալ աղեկ ա: Ու թըխ ես
բենամուս չէղիմ»:

էտոնք օր քընան, Շամամն էլավ, համա ուր էրեխեն գար-
կեց ուր հունթ, գիշերով փախավ, էտոնք խըլըսուն էլան, տեսան,
օր Շամամ չըկա:

- Հայ վախ, հայ վախ, - ասեցին, - մենք էրթանք, ի՞նչ պա-
տասխան տանք: էրթանք, ասենք՝ տարանք, խոր թասլիմ էրե-
ցինք, չէղի: Պըտի խորից ջույաբ գա՝ իմ ախչիկ չէկեր իմ մոտ:
Ապա մենք էրթանք, աղեկն են ա, օր իմալ էղեր, հեմալ տողրուն
ասենք:

էլան, տարցան, էկան:

Պետրոսն ասաց. - Դու ի՞նչ շուտ տարցաք, էկաք:

էտոնք ասեցին. - Քյեզնե ի՞նչ պախենք, վալա՛, քացինք
սարի գըլոխ, գիշեր ենտեղ մացինք, խըլըսուն էլանք, օր չըկա:
Ի՞նչ գիտես, զեն էրա մեզի:

էնտեղ Պետրոս ախ քաշելով ասաց. - Քացեք ձեր տըղեր,
ձեզի ի՞նչ պըտի ասեն էլ:

Պետրոս գիշեր-ցերեկ մընաց կասաֆաթի մեչ: Թըխ Պետ-
րոս մընա ուր կասաֆաթի մեչ, մենք դանդանք վըր Շամամին:
Տեսինք Շամամի հալ ի՞նչ պըտի էղի:

Շամամ էտ գիշեր չուր մի լուս գացեր ա, շատ ու քիչ
Աստըված գիտա, ինչ կանդար տեղ ա գացի: Արեն օր կառի, կերթա
հախպըրի մի վերեն:

Ախ, ախ, - կասա, - ես մեռա:

Կասա. - Փշու՛մ նըստիմ ես հախպըրի վերեն, ոըհաթիմ, ինչ
կէղի, ուր քյեֆն ա:

Շամամ կը նըստի հախապրի վերեն, քուն կը տանի, էնտեղ
կը բընի: Մեկել կիմնա, օր կը տեսի կեսօր ա:

Կելի, կը նըստի, կը տեսի, օր էնդեխեն տաս-տըսերկու
ծիավոր էկան: Շամամն էլ շատ խորոտ ա:

Չամա ուր յազմեն կը քաշա ուր գըլխուն, կընգի վըր ուր
քիթ ու պերնին: Դու մ'ա'սեր, էտ ծիավորներն օր կուգան, էտտեղ
մեկ գեղ մի կա, էտ ծիավորներու ճոչ Մանուկ աղի տըղեն ա:
Ինքն էլ ազնաբ ա:

Կուգան, կը տեսին, օր հախապըրի վերեն մեկ կընիկ մի
նըստեր ա, էրեխե'մ էլ գլիրկն ա, էրես ծածկեր, ընգի վըր քիթ ու
պերնին:

Մանուկ աղի տըղեն կը հրամայա, կասա. - Տըղեկներ, հի-
ջեք, էտի շիթկեք՝ տեսինք, սա՞ղ ա, թե՞ մեռուկ ա:

Եփ օր կիջեն, շիթկեն, տեսին, օր սաղ ա: Ուր էրեսն էլ ծած-
կուկ ա: Ինչ կենեն, էրես չըպանա:

Մանուկ աղի տըղեն կուգան, կասա. - Դու հորի՞ քու էրես չըս
պանա, մենք կղարիք ենք: Դու մեզնե հորի՞ կամըչնաս:

Կասա. - Ախպե'ր, չէ՞ դու մարթ եք, ես կընիկ եմ: Իմա՞լ ես
ծեզնե չամչընամ:

Մանուկ աղի տըղեն էտոր էրեսն օր կը պանան, համա էնտեղ
Մանուկ աղի տըղի չոքերու կուդուն կը կոտրի:

Մանուկ աղի տըղեն մըչ ուր սըրտին կասա. «Ախշըրքի մեչ
իմն օր կա, ես ա, իմն օր չըկա, ես ա:

Ասաց. - Ախչի, դու ո՞ր տեղացի ես:

Շամամն ասաց. - Չըմ գիտե, թե որտեղացի եմ: Ես էլ գիս
էտտեղ տեսա: Վերև՝ Աստըված, ներքև՝ դու: Ինչ գիտես, զէն էրա,
աղա՛ ջան:

Ասաց. - Ախչի, կավըլ էղի, ես պըստի քեզի առեմ: Ախչի, դու
ի՞նչ կասես:

Ախչիկ ա՛խ քաշեց ու էլանց:

Ասաց. - Վա՛խ, վա՛խ, աղա՛, դու էտ ի՞նչ էր՝ ասեցիր: Դու քու
միթք հորի՞ փոխիր իմ վերեն: Ես պահմա մի ունիմ, թե դու
տասնուխինգ տարի իմ պահման կը պախես մըչ քո սըրտին, ես
պըստի քեզի առիմ: Չէ՛, օր չըպախես, ընծի սպանա՛, իմ տըղեն էլ
խըտ ընծի ու թոխ քնա՛:

Տըղեն ասաց. - Կավըլ էղի, տասնուխինգ տարի քեզի իմ քուրոչ պես պախենմ, չուր քո պահման կատարի:

Ախչիկ էլավ, ընգնավ տըղի խետ ու քննց տըղի տուն:

Տըղեն ուր մորն ասաց. - Մարե՛, էսա կընիկ ես գըտեր եմ, պերեր եմ: Պըտի իմ քուրոչ պես պախես:

Շամամ մընաց էնտեղ:

Շամամն ասաց տըղին. - Կը խընթերն, որ քո մոր թամբեխ էնես, որ կալիբ մի սապոն ընծի տա, որ ես իմ տըղեն հըմեն որ լողկըցում:

Ասաց. - էտի ոըհնթ պան ա, ինչ քո լեզուն պըտոտա՛, ուզն, չամչընաս: Քեզի հնգըր ա:

Տըղեն մոր թամբեխ էրաց, ասաց. - Մարե՛, որ կալիբ մի սապոն տաս իմ քուրոչ, որ ուր տըղեն հըմեն որ լողկըցու:

Շամամ մեկ տարի թամամ տըղեն հըմեն որ լողկըցուց:

Տըղեն հորբեզոր հնռեմ էկավ:

Տըղի տաս տարին որ թըմավ, տըղեն էղավ, ինչպես որ մեկ քսան տարեկան ջըհել մի: Դորուս տըղեն էլավ, կերթեր, ճըժերու խետ կը խաղեր: Վիր ճիժն համա որ պըռներ, կը վերցեր, տըփեր գետին:

էտ գեղական գըմեն էղան էտ տըղի վերեն գանգըտվոր: էլան, քնցին Մանուկ աղի մոտ:

Մանուկ աղին ասին. - էս ի՞նչ հեթիմ էր, դու պերիր, թողիր մըչ մեր ճըժերուն, որ հըմեն որ մեր ճըժեր կը ծեծա ու մեր ճըժերու գըլոխ կը կոտրա: Մենք պըտի էլինք, էտ տըղի դանդեն թողենք, փախենք:

Մանուկ աղի տըղեն լսեց:

Գեղականին ասաց. - էս չիմանամ, որ խետ մ'էլ դու էտ քըսեն էնեք տըղին: Խետ մ' էլ որ դուք էտա քըսեն տըղին էրեցիք, գըմենքտ ի գեղեն դուս կենեմ:

Գեղական էլ չիխշըցան ձեն խանած են:

Տըսնուխինգ տարին որ թըմավ տըղին, տըղեն էմալ փայլեվան մի տարցավ, էլ մարթ տըղի մեչք գետին տրող չըկեր: Տըղեն թըխ մընա էնտեղ, ապրի ուրին, մենք տաննանք վըր Պողոսին ու Պետրոսին:

Պողոս, Պետրոս կելին եռսուն մարթ կը պատրաստեն, կասեն. - էլեք, գացե՛ք Մանուկ աղի գեղ, էնոր յոթ տարվան վերգին մացեր ա: Շուտ օր ժողվեք, առեք, գաք:

Էտ եռսուն մարթ կելին, կու գան Մանուկ աղի գեղ: Մանուկ աղին կասեն. - Քո յոթ տարվան վերգին մացեր ա, ահա շուտով մինչև վանդ էսա գա՛խ, կը ժողվես եռսուն պեռ փարեն, ժողվա՛, չըժողվես, ահա՛ քո գըլոխ կըտրեցինք:

Էտ տղղի անուն էլա տրած ան Սերոփ: Տըղեն հըմեն օր կերթա, ուրին նեճիր կենա ու կու գա՛:

Տըղեն հիրիկուն նեճրի տեղեն կու գա՛, կը տեսի, օր գոռուն ու գոչուն ընգեր գեղի մեչ, կու լան ու կը բռռան:

Տըղեն կասա. - Մարե՛, էս ի՞նչ էղեր ա:

Մեր կասա. - Լա՛ն, Պողոս, Պետրոս ճամխած ան, յոթ տարվան վերգին կուզեն: Էն համար գոռուն ու գոչուն ընգեր գեղի մեչ:

Սերոփ կասա. - Մարե՛, չըգիտե՞ս՝ էտոնք քանի մարթ էկած ան:

Շամամ կասա. - Լա՛ն, գիտեն, եռսուն մարթ էկած ան:

- Մարե՛, - կասա, - էս կելին, էրթամ էտ եռսուն մարթն էլ պըռնեն, մորթեն:

Շամամ կըզի գետնին, շուքըր կուտա մըչ ուր մըթքին, կասա. «Գոհանամ քենե, Աստղված, իշալա իմ տղղեն պըտի ընծի ախշըրքի մեչ սեվերես չենա»:

Կասա. - Լաո՛, արե՛, քեզի խըրատ տամ:

Սերոփ կասա. - Մարե՛, ի՞նչ խըրատ կու տաս ընծի, էս քո խըրատին կը լսիմ:

Կասա. - Լաո՛, ձեն մ՛է՛ներ: Թըխ փարեն ժողվեն, պըրծին, էս քեզի կասեն:

Էտոնք զըփարեն կը ժողվեն, եռսուն պեռ կը թըմեն, օր խըլըսուն պըտի էլին ու էրթան:

Հիրիկուն Շամամ կը կանչա Սերոփին, կասա. - Սերոփ, էտոնք խըլըսուն կերթան: Էս քեզի խըրատ կու տամ, շիտակ անգա՛չ էրա իմ խըրատին: Դու գիշեր կելիս, կերթաս, կը կայնիս էնոնց ճամբխու վըրեն: Կաչքես, թե նոնք ընցած, քացած ան, կերթաս, կը խասիս, ինչ կենիս, դու գիտես: Չէ օր չընցած, քացած ան, էնտեղ կը կայնիս, քեզի ջըղարե մի կը քա՛շես, չուր էնոնք կու գան: Էնոնք օր էկան, էնոնց կը բռռաս, կասես՝ կայնե՛ք, մ՛ընցիք,

իմ պատժին տվե՛ք, նո՛ր ընցեք: Էնոնց ճոչի անուն էլ Մուշեղ ա: Էնոնք կերթան, Մուշեղին կասեն՝ մարթ մ՛ էկե, կայնե վըր ճամբխու կասա՝ իմ պատժին տվե՛ք, նո՛ր ընցեք:

Մուշեղ կասա. - Քացե՛ք, խարցուցե՛ք, տեսե՛ք՝ էտոր պատժին ի՞նչ կուզա՛:

Կու գան կասեն. - Ա՛յ մարթ, քո պատժին ի՞նչ կուզես:

Սերոփ կասա. - Պեռ մի փարա ու մարթու մի գըլոխ իմ պատժին ա, տվե՛ք, նո՛ր ընցեք, քացե՛ք:

Կերթան, Մուշեղին կասեն. - Պեռ մի փարա ու գըլոխ մի կուզա՛ ուր պատժին:

Մուշեղ կը հրամայա. - Տըղա՛, իրեք-չորս խոփ գացե՛ք, գէնոր ոտ ու գըլոխ քարոցեք ու էնոր թեվեր կապե՛ք ու պերե՛ք ընծի: Օր տեսինք էնի ի՞նչ մարթ ա, էկեր իմ հանեռ ու ընծեն պատժի կուզա՛: Չէ՛ ես Մուշեղն եմ: Պողոս, Պետրոսից օր տա պըռօփ, մարթ իմ հանեռ չըկանա գրուցա:

Չորս-խինգ խոփ կէլին, էրթան, ծեռ կը թալեն հինե: Էն էրկըսին ամեկուն չափալեխ մի կը գանի, էն մեկի վիզ կը պըռօփ, էն մեկէլին ա՛ կը ծըռի վիզ, էն մեկին էլ ըզթեվ կը կըտրա, էն մեկին էլ ըզվոտ կը կըտրա:

Էն ոտ կըտրուկ կու տա էն մեկի շալաք, կասա. - Չեր աղեն վո՞ն ա, տարե՛ք ձեր աղեն:

Մուշեղ կը տեսի, օր մեկ էկավ մարթ մի շալաքն ա ու արուն կը թափի մոտեն ու կու քա՛:

- Յա՛, յա՛, - ասաց, - տըղեկներ՛, է՛տ ինչ ա:

Կասեն. - Վա՛լա, զարկեց էն էրկըսի վիզ պըռօուց, ու մեզի էլ էս հըմլա՛ էրաց, ասաց՝ քացե՛ք, ձեր աղեն վոն ա, խաբա՛ր տվեք:

Համա էնտեղ Մուշեղ հերստավ, քաշեց ըզթուր, ասաց. - Տըղեկներ, խասիք էնոր ճոչ կտոր էնոր անգաչ թողե՛ք, էմալ պըրտեք գէնի:

Էտոնք օր քըշեն վըր Սերոփին, Սերոփ դու գողի մ՛էղիր, ընփ միճըվներ, ամեկ դեխ մի գա՛ր շըրճա՛: Սերոփ ըզհմեն ճարտեց, գՄուշեղ պըռնեց, քիթ ու մոութ կըտրեց, չորս-խինգ խատ էլ առամ պերնեն քանդեց, զարկեց ճակատ, ասաց. «Քու աղեն վոն ա, դե քնա՛, քու աղին ջուլա՛ր տու»:

Մուշեղ քննաց դեն, մենք տանճանք վըր Սերոփին: Սերոփ առավ եռսուն պեռ փարեն էլ, տանրցուց, պերեց մըջ գեղին: Գեղական էլան, տեսան, օր Սերոփն առավ եռսուն պեռ փարեն էլ, էկավ:

Աղեն քննաց մոտ, ասաց. - Սերոփ, որթի՛, էտ ի՞նչ էրեցիր, էտ ի՞նչ էրեցիր:

Ասաց. - Աղա՛, ի՞նչ եմ էրեր եմ: Խըլղի փարեք էնոնք հորի՞ ժողվեն, տանեն ուտեն: Չէ՛, թը գեղական ուտեն:

Աղեն ասաց. - Տո լա՛ո, վանղ Պողոս, Պետրոս կու քան մեզի օլուխ-չոլուխով կը կըտրին:

- Աղա՛, չէ՛, աղա՛, մը՛ վանխենա: Քանի իմ քան սաղ ա, մարթ քեզի պան չըկանա ասա: Օր ես մեռա, խո դուն քըջ ընծի էվել չես:

Թըխ էնոնք մընան էնտեղ, մենք տանճանք վըր Մուշեղին: Մուշեղ քննաց, խասավ գեղ, գեղական էլան, տեսան, օր ի՞նչ տեսին. Մուշեղի քյիթ ու պերան կըտրուկ, ատըմներ շարուկ ճակատ, էկավ:

ՁՄուշեղն առան, քննցին Պողոսի մոտ, Պողոսն ասաց. - Յա՛, յա՛, Մուշե՛ղ, էտ ի՞նչ էղավ ձեզի: Էտ վո՞ն ձեզի էտ հըմվա էրաց:

Ասաց. - Պողոս՛ աղա, մենք քննցինք, փարեն ժողվեցինք, եռսուն պեռն էլ թամամ, գեղացիք պան չասին, էկանք ճամբխու վըրեն, մեկ էլ տեսանք, օր մարթ մ՛ էնտեղ կայնուկ էր: Քչեց վըր մեզի, տըղեկներ հըմեն սպանեց ու ընծի էլ էս հըմվա էրաց, առավ փարեն, տանրցավ, ասավ՝ քննցե՛ք, ձեր աղեն վո՞ն ա, խանթա՛ր տվեք: Ես կերթամ Մանուկ աղի կուշտ նըստիմ, չուր դուք գաք:

Համա Պողոս շուտով կանչեց Պետրոսին, ասաց. - Պետրոս՛, շո՛ւտ կելիս, կը ժողվես մեկ-երկու խարիր տըղա, կերթաս գեղ, բոլոր կը կըտրես, կը թալնես, զեն մարթն էլ կառիս, գան ընծի:

Պողոսն էր էլավ խըլըսուն, առավ չորս խարիր տըղա, քննաց գեղի չորսբոլոր գիշերով առավ, մինչև լուսցավ:

Գեղական լուսմութ էլան, տեսան, օր գեղի չորսբոլոր ասքար պըռներ ա: էլան, քննցին Մանուկ աղի մոտ:

Ասին. - Մանուկ աղա, Աստղված քու տուն ավիրա՛, քո տղ-
դին էլ խեստ, ես ի՞նչ բալա եր, պերեց, թողեց մըջ մեզի, օր մեր գեղ
տվեց կըտրել:

Շամամ լուսմութ էլավ դուս, տեսավ, օր գոռուն-գոչուն
ընգեր մըջ գեղին:

Էկավ ջուլ տղդի էրեսի վերեվեն վիրուց, ասաց. - Սերո՛ւփ,
մեռի՛մ քեզի, չուր ե՞փ տու քընիս, էլի՛ վեր, չէ՞ տղավ կեսօր:

Տըղեն էլավ վեր, ճուր պերեց, տղդեն լվացվավ, պերեց
խաց տրեց հառեճ, կուռե՛մ էլ կմթ, տղդեն կերավ, պերեց տղդի
սիլեք տրեց հառեճ, ասաց. - Սերո՛ւփ, մեռի՛մ քեզի, քո սիլեք
կապա՛ վըր քեզի:

Ասաց. - Մարե՛, ի՞նչ էղեր ա:

Ասաց - Չորս խարիր ջան էկած, գեղի բուլորն առած ան,
գոռուն ու գոչուն ընգեր միճըվներ:

Տըղեն ասաց. - Մարե՛, չո՞րս խարիր ջան: Ես ասի կայի չորս
խաճաճ ջան են: Օր բալքի իմ թեվեր փշու՛մ նեղեններ: Ետի հե՛չ, իմ
կուրին տո՛ւր, ես ջըղարե մի քաշեմ:

Սերն ասաց. - Լա՛ո, էլի՛, էլի՛, մըկա գեղ ծեռաց կերթա,
ջըղարի գախ չի:

Ասաց. - Մարե՛, մը՛ վախենա, մեկ սըհաթ, տե՛ս իս ինչ կենեմ:

Սերուփն էլավ, քնաց Մանուկ աղի հօդի տուռ, օր Մանուկ
աղեն ծեռներ տրեր ծոց, կու լա ու կերթա իգա:

Սերուփ քնաց, ասաց. - Աղա՛, բարի լուս քե: Ի՞նչ էղեր քեզի:
Չորի՞ կու լաս: Ա՛ռ կուրին քեզի, ջըղարե մի փաթա՛:

Մանուկ աղեն լալելեն ասաց. - Աստղված քու տուն ավիրա՛
ու քու պերողին էլ խեստ:

Օր էմալ ասաց, համա Սերուփ հեռստտավ, քաշեց գթուր ու
ընգավ զորքի մեչ, մեկ սըհաթ չըթըմավ, մեկ Պետրոս պըռծավ
միճըվներուց, փախավ: Առավ Պետրոսի հետև, քնաց գեղի թա-
լան զըմեն ժողվեց, պերեց:

Պողոս էլավ, տեսավ, օր թա Պետրոս մինակ կու գա, էմալ
կը փախի, օր ըսկի չիշխընա էտեվ աչքա:

Պողոս քնաց հառեճ, ասաց. - Պետրո՛ս, Պետրո՛ս, էտ ի՞նչ
էղավ քեզի:

Ասաց. - Ախպե՛ր, ես էլ չըմ գիտե՛ ի՞նչ էղավ: Ես տեսա, օր մարթ մի ենդեխեն էկավ, ընգավ մըջ տղղեկնեբրուն, տղղեկնեբրուց մարթ չըթողեց: Անջախ օր ես պըռծեր եմ, փախեբր եմ, էկեր եմ:

Պողոս համա հեռստտ սրտով, - Հայ, - ասաց, - Աստղված ձեր տուն ավիրա՛, ես Պողոս փայլեվան էղիմ, վըր ընծի պանցր մարթ է՛լ էղի:

Լուսմուք էլավ, հրաման էրաց, ասքար ժողվեց ու քնաց: Էնի թըխ ուր ասքրի ժողվելուն թ՛էղի, Շամամ Սերովի ճամբխեց, ուր խոր թալան էլ պերեց:

Խըլըսուն Պողոս ասքար էրաց ու էկավ, գացին էնտեղ, քառսուն օր կըռիվ էղավ: Էլ մարթ չըթողեց, ջանտեց Սերովի:

Ժողովուրթն էլան, քանցին Պողոսի մոտ, ասին. - Պողո՛ս, դու մեզի վերճացուցիր, թե ճար մի կա, էրա՛, չէ՛, օր չըս կանա ճար էնե, մենք հըմենքս էլ կերթանք էտ մարթուն թասլիմ կէղինք:

Պողոս խըլըսուն էլավ, կանչեց Պետրոսին, ասաց. - Պետրո՛ս, կէլիս, կերթանք կըռվու տանտ: Յան մենք էլ մեր ժողովուրթի խետ կը սպանվենք, յան էտ մարթուն կը սպանենք, մեր ժողովուրթ կազատենք:

Խըլըսուն էլան, ընգան ժողովուրթի խետ, քանցին կըռվու տանտ: Շամամն էլավ, տեսավ, օր Պողոսն ու Պետրոս ընգան կըռվու հանե՛ն ու կու քան:

Կղանչեց Սերովին, ասաց. - Սերովի, արե՛, իմ տղղին պանձ ասիմ, մեռի՛մ քեզի:

Ասաց. - Մարե՛, ի՞նչ կասես, ժի՛ր ասա, իմ քըռտինք պաղավ:

Ասաց. - Էնա էրկու մարթ կը տեսի՞ս, օր ընգան, հանե՛ն կու քան: Էնա կարմիր ծիսավոր չըսպանես, քանի կանաս զէնի պըռնես, պերես ընծի, օր ես զէնի իմ ծեռնով սպանեմ, օր իմ սիրտ ողիանի լավըմ:

- Մարե՛, բանքե էնի զանկեց, ընծի սպանեց: Ապա դորուս, իմա՛լ կէղի:

- Լա՛ո, էն էլ դու գիտես, իմալ կէղի:

Սերովի քնաց, քնաց հանե՛ններ ու կըռվավ չուր կեսօրին: Պետրոս կը տըլըպի, օր զանի զէտի սպանա, էտոր սըրե՛ն կու քան, մոր խոսքն հանպով զՊետրոս չըսպանա: Համա կառի Պետրոսի հետև: Պողոս կը փախի, զՊետրոս կը պըռնա ու կառի, կու քան:

- Ահա՛, մարե՛, - կասա, - քո դուշման պերեցի: Ինչ գիտիս, զէն էրա: Ես կէրթամ կըռվու մեջ:

Պետրոս օրթա կուքա, աչքն օր կը քիսի կընիկ, ըզկընիկ կը ճանչընա, արտըսունք աչքերուց կը թափի:

Համա կընիկ կէլի, զինք կը թալա վըր իրկան ոտաց, կասա.
- Մի՛ լա՛, Պետրո՛ս, մի՛ լա՛, էսի քո տըղեն ա:

Էնտեղ Պետրոս կը կըզի գետնեն շուքըր կու տա, կասա.
«Գոհանա՛մ քենե, Աստըվա՛ծ, չէ՞ ուրիշ մարթ չէր ընծի պըռնեց, իմ տըղեն ա՛ ընծի պըռնեց»:

Կը փաթվին իրար ընտեղ ու կը նըստին իրարու կըշտի խետ: Աղիաթ մի կը մընա, Սերոփ կըռվուց կը տաճնա, կու քա, կը տեսի, օր ուր մերն ու էտ մարթ փաթված հիբուր ու նըստած ա՛ն:

Մըջ ուր մըթքին կասա. «Վա՛խ, մարե՛, դու ի՞նչ բերա՛խտ իր: Օղորթմ ա, օր կընգա՛ն բախտ չըկա: Ի՛մեր կուզեր, օր զընծի տեր սպանել»:

Համա էն տեղեն գթուր կը քաշա՛, կու գա՛ դըխ մեր:

- Մարե՛, - կասա, - կայնի՛ տե՛ն, ես ի՞նչ խաղամ քո գըլոխ, դու կուզիր, օր ընծի տեր սպանել, օր քո սըրտի փափա՞ք կատարի:

Համա մերն էնտեղեն լալեւեն կէլի ու կէրթա, կընգի տըղի վիզնուվե, կասա. - Արե՛, լա՛ն, էսի քո խերն ա:

Տըղեն կասա. - Մարե՛, մըկա էտի իմ խե՞րն ա:

- Խա՛, լա՛ն, քո խերն ա:

Գալու պես կը պըռնա խոր ծեռ, կը պաքա: Խեր կը պըռնա ուրախութենով տըղի էրըսներ կը պաքա, կասա. «Գոհանա՛մ քենե, Աստըվա՛ծ, չէ՞ ուրիշներ ընծի չըպըռնեցին, իմ տըղեն ընծի պըռնեց, իմ նամուս չըկտորավ աշըխրթի մեջ, թոխ ես մըկա յէ մեռնիմ»:

Պետրոս հրամայեց տըղին, ասաց. - Գճա՛ էնա մարթն օրթա չադրի տակ նըստուկ ա, էնի քո խորոխպերն ա: Գճա՛, էնոր ծեռ պաքա՛, ա՛ն, արի՛ էստեղ:

Տըղեն էլավ, պըտի էրթեր, խեր ծեռ թալեց հինե, ասաց. - Կայնի՛, մեռի՛մ քեզի, քո սիլեք հա՛րցկա՛, նո՛ր գճա: Էնոնք օր քեզի տեսան, զըմեն հախու կը մեռին: Գճա՛, հեռու կայնի՛, կանչա՛, ասա՛ Պողո՛ս, Պողո՛ս, էլի՛, արե՛, իմ խեր Պետրոս քեզի կը կղան-

չա: Չէ՞ ես Պետրոսի տղղեն եմ: Օր տաւ իմ անուն տրեր իր Անանուն տղղա: Մի՛ վախենա, էլի՛ ու արե՛:

Պողոսն օր տղղի ծեն լսեց, համա լալելեն էլավ, էկավ, զինք թալեց տղղի վիզըվե, պղռնեց, տղղի էրեսներ պաքեց, տղղեն պղռնեց խորոխպոր ծեռ պաքեց, առավ, էկավ ուր խոր ու մոր մտտ:

Շամամ տեսավ, օր տեքըրն էնդեխեն էկավ, էլավ ու քնաց, զինք թալեց տեքեր ոտաց:

Պողոս էնտեղ էլաց, պղռնեց Շամամի էրես պաքեց, ասաց. - Լա՛ո, ես ի՞նչ պան էր հէլավ մեր գըլոխ:

էկան, նըստան չադրի տակ: Ուրախցան, ժողովուրթ մոռցան:

Մեկ կես սըհաթ էնտեղ մացին, Շամամն ասաց. - էտա ժողովուրթին ջույար ճամբխեք, թոխ էտոնք ուրախնան, մըկա զըմեն հախու կը մեռին:

Կանչին, մարթ մի պերեցին, ճամխին մըջ ժողովուրթին, ասին. - Մի՛ վախենաք, ես մարթ Պետրոսի տղղեն ա:

ժողովուրթ հէլան, ամեկ ուր տեղ քացին:

Պողոս ճամխեց, գեղի աղեն պերեց, տրեց խըտ ուր կըշտին, ասաց. - Թե տու ես ի՞նչ պարիքներ ես ընծի էրեր ես: Աստղծու պարիքներ քյեզի էղի: էսկից վեր՞ դու իմ ճոչ ախպերն ես, ես քո պղզտիկ ախպերն եմ: Քանի օր ես սաղ եմ, պիտի օր թամբեխ էնեմ քո գեղին, մարթ չըմոտնա ու քու գեղեն պան չուզա: Պըտի տու ազատ ապրիս քու էրած պարիքներու հապով:

էլավ Պողոս աղեն, խաթըր առավ Մանուկից, վերցեց ուր խարս, առավ, էկավ ուր տուն:

Մեկ շապաթ մընաց, կանչեց խարսին, ասաց. - Որթի՛, արի՛, քու գըլխու գալածն ինծի թարի՛ֆ էրա:

Ինչ օր էկեր էր ուր գըլոխ, մեկ-մեկ պատմեց ու ասաց Պողոսին:

Պողոսն էլավ, ասաց. - Քանցե՛ք, Մանուկ աղի տղղեն առե՛ք, ընծի՛ պերեք:

Քանցին, Մանուկ աղի տղղեն պերեցին: Պողոսին էլա մեկ էն տեսակ ախչիկ մի կեր, օր լուսնըկի պես փայլ կուտեր:

Պողոս պերեց Մանուկ աղի տղղեն ուր տուն, ուր ախչիկ պսակեց վերեն, յոթն օր, յոթ գիշեր խարսնիք էրավ, ասավ. -

Որթի՛, էլի՛, քնն՛ քո տուն, ես էլ քո պանդխտներու էնելուն: Իմ ախչիկ պսակեցի վըր քեզի:

Սերովին էր մեկ իրեք-չորս տարի ապրավ էտտեղ: Իրեք-չորս տարով ետ, իընցեն մեկ օր, նըստած էն էնոնց հողեն, քըսա կենեն, ծիու բախս կենեն, ամեկ ուր ծին կը քովեր:

Տեսան, օր մարթ մի տըսուց էկավ, ասաց. - էտ ի՞նչ ծիու բախս ա կենեք:

Ասեցին. - Աղեկ ու վատ ծիու բախս կենենք:

Ասաց. - Դու ի՞նչ գիտեք աղեկ ծի դո՞ր կա: Ախչըրքի մեչ մեկ ծի կա աղեկ՝ Գալթու փաշի ծին: Էլ էնոր պես աղեկ ծի ախչարք չըկա:

Չեն ընգնով Սերովի անգաչ:

Սերովին ասաց. - Ահտ էղի վըր իմ քանին, չուր ես էն ծին չըպերեմ, էլ էտտեղաց խաց չուտեմ ես:

Խըլըսուն էլավ, խորն ասաց. - Ափո՛, ես կերթամ:

Ասաց. - Լա՛ն, դո՞ր կերթաս:

Ասաց. - Կերթամ, Գալթու փաշի ծին բերեմ:

Խերն ասաց. - Լա՛ն, մենք կը տըլըպենք, օր քեզի շուտով պսակենք, դու դո՞ր կը թողես, էրթաս:

Տըղեն ասաց. - Կա՛վըլ էղի, ափո՛, չուր ես էտա ծին չըպերեմ, ես պըտի իմ խարսնիք չենեմ:

Ինչ էրեցին, տըղի խետ ճար չէրավ: Տըղեն էլավ, կանչեց ուր Աստըված ու ընգնով ճամբախ, քննց: Քիչ քննց, շատ քննց, Աստըված գիտա, քննց, Գալթու քաղաք դուս էկավ:

Քննց, մեկ ամիս էտ քաղքի մեչ մընաց, ինչ ճար էրաց, ծիուն ճար մի չըկարցավ էրեր էր, ծին կղայդուկ ա, կղայդի պալ-նիսն էլ ախչըկե ծեռն ա:

Ենի թըխ չարչըրվի դըխ ուր տանջանքին, մենք տաննանք փաշի վերեն: Փաշի հանեճ մեկ մարթ մի կա, անուն Օվանես ա: Ինքն էլ շա՛տ զոռբա՛, կղոչախ մարթ ա: Աչք տրեր օր թա փաշի ախչիկ պըտի առի: Է՛, ի՞նչ, կարելի՞ յա, փաշի ախչիկ զետի կառի՞:

Էտ էլ փաշի ախչըկեն կասա. - Քանի օր իմ քան սաղ ա, նա՛ պըտի թողեմ քեզի տանին, նա՛ էլ դու պըտի իմ ծեռենն պըռծնիս:

Փաշեն էլ ա էտ Օվանեսից շատ կը վախենա: Քանի օր ինքն անաստված մարթ ա:

էն մեկ օր Սեբոսի կէլի, կերթա պառավու մի տուն, - Պառավ, - կասա, - ա՛ն էնա օսկին, տա՛ր, փըշու մի խա՛ց պեր, ես ուտեմ:

Պառավ կերթա, խաց պերա, տըղեն ուտա, կասա. - Տըղա՛, քու լեզուն չըմանի էստեղաց մարթու լեզուն:

Կասա. - Մարե՛, ես կարիք եմ: Մարե՛, տա ձեր քաղքի դրութեն իմա՞լ ա:

- Է՛, - կասա, - լա՛ն, վաճղ ինչ կղըղա՛ր օր ախչըկներ կան, զըմեն կը ժողվին, կերթան, ուրախութեն կենեն, փաշի ախչիկն էլ խետ: Վաճղ հիրիկուն փաշի ախչիկ օր ուրախութենի տեղեն էկավ, մինակ կերթա, կը մըտի բաճի մեչ, հա՛վուզ կա, հա՛վուզ կը լողկընա, նոր կու գա, էրթա պառկի:

- Մամիկ, - կասա, - էտ բաճ ո՞ր տեղն ա:

- Լա՛ն, - կասա, - փաշի տըռան դեմու դիմացն ա: Բաճի տուռ մըկա բաճ, զըմեն կերթան, կը պըտտտեն, քյեֆ կենեն ուրանց մեչ:

Տըղեն մըջ մըտին կասա. «Վալա՛, էսի աղե՛կ պան ա: էրթամ բաճի մեչ, տափիմ, օր ախչիկն էկավ, լողկըցավ, բալքյի էրթամ էտ պալնիս ախչըկե շորերու միչեն գողնամ ու էրթամ, փաշին ասեմ ես շատ աղեկ ծի տիրող եմ: Բալքյիմ ծի առին ծիանքներու մեչ, չուր մի օր մ՛էրկու էնոնք պալնըսի շուռ գան, ես գիշեր կէլիմ, կառիմ ծին ու կը փախիմ»:

Ասաց. - Մարե՛, շնորհակալ եմ, դե, մընա՛ս պարով, ես կէլիմ էրթամ:

Էն էլ տըղի միթք չըգիտե ի՞նչ ա:

Կէլի, կերթա բաճի մեչ, կը տեսի, օր՝ Է՛, զըմեն լըցված բաճի մեչ, շուռ կու գան ու քյեֆ կենեն: Ինքն էլ կերթա բաճի մեչ, կը պըտտտա ուրին, չուր մութ կու տա:

Հուշիկ զինք կու տա ծառի մի տակ ու կը տափի: Դու մ՛ա՛սե, թե Օվանեսն էլա էտ գիշեր գիտա, օր փաշի ախչիկ պըտի գա՛ էտտեղ լողկընա, Օվանեսն էլ կերթա, կը տափի:

Օվանես կասա. «Յա՛ն պըտի էսօր ես մեռիմ, յա՛ն պըտի փաշի ախչիկ պըռնեմ տըկլոզ մըջ հա՛վուզին»:

Փաշի ախչիկ հիրիկուն կու գա՛ ուր ընգերներով, կը մըտին բաճի մեչ, շատ ուրախութեն կենեն, - Ախչկընե՛ր, - կասա, - կը խընթրեմ ձենե, թե կարելի յա, դուք էրթաք:

Էն մեկ ախչիկ կասա. - Չէ՛, չէ՛, խանըմ, դըռ շուռ ա:

Կասա. - Օր շուտ ա, ձեզի մեկ սըհաթ էլ ժամանակ կու տամ, էլ իմ գըլոխ չըցավցուք, մեկ սըհաթն օր կը թըմի:

Ախչկըներ կէլին, քաշվին ու կէրթան: Կը մընա միհնակ ուր խըզմաթ էրող ախչիկ:

Էնոր էլ կասա. - Քնա՛, իմ տեղ թա՛լ ու քնա՛, քեզի ոըհաթ քընի՛: Ես կէղի օր հաճան քընիմ, դու խը ծի մի՛ չարչըրվի: Դեսօր քեզի իզին ա:

Ախչիկ կէրթա տեղ կը թալա, կէրթա ուրին կը քընի:

Էտ էլ կէլի բաղի մեչ կը պըտտտա, կասա. «Տեսինք՝ էս տեղ-րանք մարթ չըկա՞, օր տըկլոզնամ, լողկընամ»:

Անկըղա՛ր կը պըտտտա, մարթ չըտեսի: Կու գա, զուր շորեր կը խանա, կը ծալա տնա մեկ դեխ, զուր ծամեր կը քանդա, կէրթա, օր մըտի ճըրու մեչ, լողկընա:

Օվանեսի աչք վերեն ա: Օվանես էլ Սերոփի չըտեսի, Սերոփի էլ զՕվանես չըտեսի:

Ախչիկ կը մըտի ճուր, Սերոփի զախչիկ կը տեսի, կասա. «Դալա թըխ մըտի մըչ հա՛վուզին լողկընա, եփ օր սապոն տվեց վըր ուր գըլխուն, էն վախտ ուր աչքեր կը խըփու, էլ չըտեսի: Էն վախտ կանամ գողնամ ըզպալնիս»:

Սերոփի մըտածունքն էտ ա: Դու մ'ա՛սե, թե Օվանեսի մըտածունքն էլ էտ ա: Ախչիկն օր կը մըտի ճըրու մեչ, օր գըլոխ կը սապոնա, Սերոփի կէնա, թե էլի ուր տեղեն, կը տեսի, օր մեկ վաճաճ ու քնաճ ախչըկե շորերու վերեն նըստավ:

- Վա՛յ, վա՛յ, - ասաց Սերոփի, - հապա իմ պան ավիրավ էս տեղ: Ես էլ ի՞նչ պըտի էնեմ:

Սերոփի քաշվավ, ուր տեղ նըստավ, ասաց. «Կայնի՛, տեսինք, էտնց մոտեն ի՞նչ կուքա դուս»:

Ախչիկ դըռ խաթար չունի, օր Օվանես նըստե վըր ուր շորերուն: Ախչիկ սապոնեց, օր հիստըկվավ, զուր աչքեր լվաճ, տա՛ր-ցավ, աչկեց, օր մեկ նըստուկ ա վըր ուր շորերուն: Աչքեց, օր տեսավ Օվանեսն ա: Դամա ախչըկե կղուղում էտեղ կոտրավ:

Ասաց. - Աստըվա՛ծ, դու ընծի էտր ծեռքեն ազատ էնես: Էլ ես ճար չունեմ:

Օվանես ասաց. - Էլ դո՞ր իմ ծեռեն կը պըռծես: Էլի՛ ու արե՛: Դեսօր էլ քեզի իմ ծեռեն պըռծնել չըկա:

Ախշիկն ասաց. - Օվանե՛ս, դու եղիս, քո Աստղված, արե՛, հեսօր ընծի ազան տրա, ես էրթամ իմ խորն ասեմ, օր՝ ափո՛, ես Օվանես կառիմ:

Ախշիկն էլ ետ մըթքով կուզա՛, օր զՕվանես խաբա՛, ազանտվի:

Ասաց. - Զէ՛, չէ՛, չըկարելի՛, օր դու հեսօր իմ ծեռնեն ազանտվիս:

Համա էլավ, քնաց, ծեռ թալեր ախշըկե, օր գուլի մեչ պըռներ, ախշիկ բոռաց ու փախավ:

Ասաց. - Օվանե՛ս, էլ քու ծեռնեն ընծի պըռծնել չըկա: ես քեզի էլ պան չըմ ասի: Կաղաճեմ Աստղված, օր դու փայլեվան Սերոփի դըրքին ռաստ գաս:

Սերոփ ետ խոսք լսելու պես ասաց. «Վալա՛, պիտի ես ես դըրք վըր ընծի պըտի չընցում»:

Համա քաշեց ուր թուր, էնդեխեն բոռալեն էկավ: Գանու պես Օվանես թողեց, փախավ: Առավ Օվանեսի հետեվ: Խասավ ախշըկե խոր տըռան հանեճ ու զՕվանես տվեց հանճեվ թըրի, բըրտեց:

Տանրցավ, էկավ ախշըկե մոտ:

- Ախշի՛, ես էն մարթ սպանեցի:

Համա ախշիկ էլավ, քնաց, զինք թալեց Սերոփի ոտաց վերեն, ասաց. - Դու հրեշտակ իր՝ ընծի խասար, ես անաստվածից ազան տրիր: Արի՛, տեսինք քո ուզան ի՞նչ ա, օր ես էլ քու մուրազ կատարեմ:

Սերոփն ասաց. - Ախշի՛ ջան, իմ մուրազ ծանդըր պան չէ, ես էկեր եմ քո խոր ծիու հապով:

Ախշիկն ասաց. - Է՞տ ա քու մուրազ, վըր իմ աչիչ: Դե հրամեցե՛ք, էրթանք, օր ես ծին տամ քեզի, օր դու տանիս, իմ խոզին ռըհաթի: Կուզա՛ թըխ իմ խեր խըլըսուն իմ գըլոխ գանի:

Ասաց. - Սերոփ, էլի՛ էրթանք, ես Օվանեսի ջանդակ տեսիմ, էնոր արուն խմեմ, իմ սիրտ ռըհաթի:

Ախշիկն էկավ Օվանեսի ջանդըկի վըրեն, թըրեց վըր ջանդըկին, ասաց. - Դու ի՞նչ անաստված մարթ իր, օր ես փորցանք իմ գըլոխ կը բերեր:

Ախշիկն առավ զՍերոփ, տարավ ուր չադրի մեչ, քնաց, Սերոփին պերեց խաց մի, թաս մ՛ էլ մեղր, ասաց. - Սերոփ, դե անո՛ւչ

երա, ես կելիմ, ծին կը թամբյեմ, գամեմ, պերեմ քու հանեմ: Խեծի՛ ու քնա՛, Աստղված քո պան հաճողա՛:

ժողովուրթ հըմեն քընուկ են: Մարթ ետ պանեն խնարթ չունի:

Ախչիկ քնաց, ծին պերեց, ասաց. - Սերո՛ւփ, խըրատ մի կա, քեզի կու տամ: Իմ խըրատ չըմոռնաս: Օր կերթաս, պանցր սարի մի տակ, են պանցր սարի տակ կըընգներ շատ կան, եփ օր կըընգներ կըուկըռան, ծին կըընգներու ձենեն կուրախնա, կելի, կայնի վըր հետին ոտներուն: Աստղծու սիրուն էղի, մուղաթ կենաս, օր ծիու վրեսեն չընգիս: Օր ընգար, մացիր դան, քո գըլոխն էլ կերթա, իմ գըլոխն էլ կերթա: Իմ խըրատն ես ա քեզի: Դէ՛լի, Աստղված քո պան հաճողա: Մըկա կը լուսնա:

Էնտեղ Սերոփ ծեռ տվեց ախչըկե ծեռաց, ասաց՝ մընաս պարով:

Ախչիկն ասաց. - Քնա՛, Աստղված քո պան հաճողա:

Սերոփն ընգավ ճամբախ, քնաց, ախչիկ տնարցավ ուր չադրի մեջ, Սերոփի հնապով էլ քուն չըկա:

Սերոփ քնաց ախչըկե ասած սարի տակ, տեսավ, օր կըընգներու ձեն էկավ, ծին էնտեղ ուրախցավ, էլնավ, կայննավ վըր ոտներուն: Սերոփ գարկեց գետին, ծին տնարցավ, էկավ:

Աղոթրան օր պանցվավ, ախչիկն էլավ դուս, տեսավ, օր ծին տուռ կայնուկ ա:

Ասաց. - Վա՛յս, վա՛յս, ես ի՞նչ պան եր՝ էղավ:

Ախչիկ դու բնախտով էղի, քո բնախտ մը՝ կուրիսե, էնտեղեն ախչիկ էլավ, խեծավ ըզծին, քնաց Սերոփի հնավար:

Քնաց Սերոփն օր տեսավ, ախչըկե ջիգար կըտըռտավ:

Ասաց. - Չէ՛, ես քե պան թամբեխ էրեցի, հորի՞ իմ խոսքին չըլսիր:

Սերոփն ասաց. - Բնալքի Աստղված ես ըմլն եր կամեցեր եր իմ գըլխուն: Ես ի՞նչ էնեմ: Ախչի՛, դու կը տաննա՞ս:

Ասաց. - Կը տաննամ, ապա ի՞նչ էնեմ: Դու ա՛ռ, քո ծին քնա՛, ես կերթամ, իմ խերն էլ, ես գիտեմ, օր իմ գըլոխ կը կըտրա: Թող ես առիմ քու դադեն:

Ախչիկն օր էտպես ասաց, արտըսունք Սերոփի աչքերուց թափավ:

Ասաց. - Ախչի՛ ջան, դու չը՞ս իգն, օր ես քեզի էլ տանիմ:

Ասաց. - Ընծի տանիս, վա՛յ թե բերանստութեան էնես խը ծի:

Սերոփն ասաց. - Ախշի՛, ուխտ եղի հանճեմ Աստղծու, ինչ օր դու ընծի ասես, ես քո խոսքեան չէլիմ:

Էնտեղ համա ախշիկ պղռնեց, Սերոփի ծեռ պագեց, ասաց. - Դե էլի՛, երթանք:

Էնոնք թղխ իգան ուրանց տուն, մենք տանճանք վըր ախշկե խոր:

Փաշեն էլավ, տեսավ, օր ջանդանկ մի ուր շեման վերեն բըրտուկ ա: Քնանց, աչկեց, տեսավ, օր Օվանեսի ջանդանկն էր: Հէլավ, քնանց ուր ախշկե չաղըր, տեսավ, օր ախշիկն էլ չըկա: Քնանց ուր ծիու մոտ, տեսավ, օր ծին էլ չըկա: Դըռ մարթ էտոր հանլեն խանթար չունի: Համա էկավ, քնանց, մըտավ տեղաց մեջ, պառկավ:

Կընիկն էլավ, քնանց տուս, տեսավ, օր ջանդանկ մ'ուրանց տըռան հանեճն էր:

Լանլիին տանրցավ, էկավ, ասաց. - Մա՛րթ, քու տուն ավիրի, դըռ տաւ քընո՞ւկ ես:

Ասաց. - Կընիկ, ի՞նչ եղեր ա:

Ասաց. - էլի՛, տե՛ս, մարթ մ՛ ա սպանած ա մեր տըռան հանեճ:

էլավ, շորեր խագավ, լուսցավ, գեղական էլ զըմեն ժողվան, էկան, տեսան, օր Օվանեսի ջանդանկ աղի տըռան հանեճ սպանած ան: Գեղական դըռ խանթար չունին, օր աղի ախշիկն ու ծին էլ տարած ան:

Օվանեսի մարթիկ ժողվան, էկան փաշի տըռան վերեն, ասին. - Փաշա՛, իլանի մենք էլ քեզի կը սպանենք մեր մարթու տեղ: Մեր մարթ դու ես տվեր ես սպանել:

Փաշի սիրտն էլ չըտարավ, լանլիին ասաց. - Ի՞նչ կուզիք իմ դանդեմ, չէ՞ իմ ախշիկն ու ծին էլ տարած ան:

Զավտըցին էտոնք, գանցին, տեսան, օր փաշի խոսք օղորթ ա:

Փաշեն ասաց. - Դըրկիցեն՛ր, լսե՛ք, ձեզի մեկ խնդիրը ունիմ ասելու, էտորից վերճ ես քաղքի խաց ու ճուր ընծի խարամ եղի, իմ կընիկ, ճիժ թասլիմ կենեմ ձեզի, ձեզի թասլիմ կենեմ Աստղված, չուր ես իմ ախշիկն ու իմ ծին չըզըտիմ, ես քաղաք մեկ էլ չի գան:

Դըրկիցենր լանցին, ասին. - Փաշա՛, էտ ի՞նչ խոսք էր՝ դու մեզի ասեցիր:

Փաշեն ասաց. - Դըրկիցներ, կը խընթրեն ձեզնե էլ հելվել-պակաս գրուցք չուզան: Իմ վերճի խոսքն էս ա:

Փաշեն էն գիշեր մընաց ուր տուն, խըլըսուն ինքն, ուր տըղեն գիշերով էլան, ընզան ճամբան: Թըխ փաշեն էրթա, շուռ գան, մենք տաննանք վըր Սերոփին ու ախչըկեն, տեսինք էտոնց վիճակն ի՞նչ կեղի:

Էկան ճամբխու խետ, Մարգրիտն ասաց. - Սերոփ, դու ընծի պըտի պախեն՝ս քո քուրոչ պես, չուր իմ խեր ու ախպեր գան, ընծի գըտին: Չէ՛, օր չըպախես, ընծի էտտեղ սպանա՛, քնա՛, Աստըված քո պան հաճողա:

Սերոփն ասաց. - Մարգրիտ ջան, չէ՞ ես Սերոփ փայլեվան եմ, իմ խոսք մեկ ա, ես էն գանխ քեզի ուխտ էրեցի, օր քեզի առա, էկա, էտ պանի համար դու սկի խոք չըտանես: Իմալ քո սիրտն ա, իմ սիրտն էլ քո սըրտի պես:

Շատ էկան, քիչ էկան, Աստըված գիտա, Սերոփն էկավ, ուր խոր քաղաք դուս էկավ:

Տեսան, օր Սերոփն էնդեխեն էկավ, գանցին Պողոսին ու Պետրոսին ու Շամամին անզըջկլա տվին, ասին. - Չեր աչք լուս, Սերոփն էկավ, ձի մի ու ախչիկ մի պերեց:

Հէլան, ուրախութենով գանցին հանոե՛, պերեցին, ուրախցան:

Շամամն ասաց. - Գոհանա՛մ քյենե, Աստըված, չէ՞ իմ տըղեն էկավ, մեկ էլ ես տեսա, ինչ կեղի, թ՛եղի:

Մընաց մեկ ամիս հետո:

Շամամ խարցուց Սերոփից, ասաց. - Սերոփ, դու պսակվե՞ր ես, չէ՞, քեզի պսակենք:

Ասաց. - Չէ՛, չէ՛, մարե՛, էտա պան մի ասեր մըկա, իմ մեչն ու ախչըկե պահման կա, եփ օր մեր պահման կատարավ, էն վախտին ես քեզի կասեմ:

Էլ մեր ձեն չէրաց:

Պողոս խարցուց Շամամից, ասաց. - Շամամ, Սերոփ պսակվե՞ր ա, թե՞ չըպսակվեր ա:

Ասաց. - Հուհո՛ւ, ձեն մը՛ խաներ, էնոնց մեչ պահման կա, օր տըղին ասենք, տըղեն կը հեռտտի:

Էլ ձեն չէրեցին: Խինգ տարի էտ մեչն ընցավ, էն մեկ օր Մարգրիտ նըստուկ էր փանջարեն, տեսավ, օր էրկու մարթընցան:

Մարգրիտ ասաց. - Սերոփի, էն էրկու մարթն օր ընցան, կանչա՛, քիզան դես:

Էկան տեսան, օր ուր խերն, ուր ախպերն են:

Ասաց. - Ախպեր՛, արե՛ք դաս, արե՛ք դաս, տեսինք դու հու՛ստ եք:

Ասեցին. - Խանըն, կղարիք ենք:

Ասաց. - Կղարի՛ք, կղարի՛ք, արե՛ք դաս ի: Նըստե՛ք, փըշու՛մ ռըհաթե՛ք, ծեզի խա՛ց կերեք, Աստըված ձեր պան հաճողա, գանցե՛ք:

Էնոնք օր էկան, նըստան, Մարգրիտ կղանչեց, ասաց. - Սերոփի, արե՛, քյե պան՛մ ասեմ: Էս էրկու մարթ կը տեսի՛ս, էնա մեկ իմ խերն ա, էնա մեկն էլ իմ ախպերն ա:

Սերոփին ասաց. - Գոհանամ Աստըծուց, իշալլահ Ասպած պըտի մեր մուրազ կատարա:

Սերոփին ասաց. - Ախպըրտի՛ք, հրամեցե՛ք էրթանք, հեսօր դու իմ կղունախն եք: Խըլըսուն Ասպած ձեր պան հաճողա:

Տարավ օդեն, տեղ քալեց, հրամայեց էկան, էտոնց ոտներ խանին, լվանցին, շորեր փոխեցին: Պետրոս էկավ, մըտավ օդեն, տեսավ, օր էրկու մարթ հօդեն նըստուկ են, շատ պատվով մարթ կերեվան:

Ասաց. - Սերոփի, դու էս մարթիկ կը ճանչընա՞ս:

Ասաց. - Չէ՛, ափո՛, ես տեսա, օր պատվով մարթ են, առա, էկա, էնոնց շորեր փոխեցի:

Պետրոսն ասաց. - Ապրի՛ս դու, որթի՛, միշտական պատվով մարթիք պեթք ա օր ճանչընաս:

Պետրոս թողեց, ընգանվ դուս: Սերոփի կայնավ էտոնց հանեմ: Մարգրիտի սիրտ չըտարավ, քնանց հօդեն, ուր խոր տան շորեր խագանվ, էկավ էտոնց մոտ:

Ախպերն աչքեց, ասաց. «Էսի կը մանի իմ քուր»: Մըչ ուր մըթքին ասաց:

Տարցավ խոր վերեն, ասաց. - Ափո՛, էսի կը մանի իմ քուր Մարգրիտ:

Խերն ասաց. - Ա՛խ, որթի՛, մեկ էլ էղե՞ր, օր ես էտ օր տեսի:

Տըղեն ասաց. - Ափո՛, էսա վերեվի շապիկ շիտակ աչքա՛, տե՛ս, մեր առած շապիկ չի՞, օր առանք:

խերն աչքեց, տեսավ շապիկ, ասաց. - Լա՛ն, էտ կտորեն մեր դիս կա, հորի՞՞ տունց դիս չըկա:

Էլ ախչըկե սիրտ չըղիմացավ, համա էկավ, լճալեից ընգա՞վ ախպոր վիզնուվեր, ասաց. - Պա՛րո՞վ, ախպե՛ր քան, չէ՞ ես քո քուր Մարգրիտն եմ, է՛:

Էնտեղ ուրախացան ու փաթվան իրա՛րու վիզնուվեր, ինչ-պես օր էնոք ուրախացան ու փաթվան իրա՛րու վիզնուվեր, Աստը-ված ամենու գերին էլ մեկմեկին արժան է՛նա՛ ուրախանան իրա՛րու վերեն:

Էնտեղ Սերոփ շուտ քնաց, ուր խոր խնարար տվեց, ասաց. - Ափո՛, էն երեկվան կղունխըներ օր էկան, Մարգրտե խերն, ախպերն եմ:

Համա Պետրոս էլավ, էկավ մոտըվներ, ասաց. - Պա՛րի եք էկեր եք, պա՛րի կղունխըներ:

Էնտեղ ուրախացան զըմեն ու երկու օր, իրեք օր մացին ուրանց ուրախության մեչ:

Իրեք օրեն ետ Մարգրտե խեր Մարգրիտ կղանչեց ու խարցուց, ասաց. - Լա՛ն, քու գըլխու գալա՞ծն ի՞նչ ա:

Ինչ օր էկեր էր Մարգրտե քըլոխ, մեկիկ-մեկիկ ուր խոր պատմեց:

Ասաց. - Ափո՛, ես էկեր եմ էստեղ, մինչև մըկա Սերոփն ընծի ուր քուրոչ պես պախեր ա: Դորուս դու գիտես: Ընծի կու տաս Սերոփին, դո՛ւ գիտես, կառիս կերթաս, դո՛ւ գիտիս: Էլ ես ուրիշ ասելիք չունիմ:

Ախչըկե խեր կղանչեց Սերոփ, գողտուկ Սերոփից խարցուց, ասաց. - Դու իմ ախչիկ Մարգրիտ կառի՞ս, քի՞ չէ՛ ես առիմ էրթամ: Ես խոսք մեր մեչ թը մընա, օր մարթ չիմանա:

Սերոփն էնտեղ պըռմեց Մարգրտե խոր ծեռ, պագեց, ասաց. - Օր դու հրաման է՛նես, ես կառիմ:

Մարգրտե խեր պըռմեց, Սերոփի էրես պագեց, ասաց. - Ախչիկ մ՛ ա, կղորբան էրեցի քեզի: Քնա՛, քո խեր Պետրոսին ասա՛, թը խըլըսուն էլի, քեզի պսակա:

Սերոփ ամոթու էլ չըքնաց խորն ասեր էր, քնաց ուր մորն ասաց. - Մարե՛, իմ խոր կասես, օր թը խըլըսուն Մարգրիտ պսակա վըր ընծի:

Շամամն էլավ ուրախելին, ծըծղալին քննց Պետրոսի մոտ,
ասաց. - Պետրոս, քեզի անգըջկլե մի տամ:

Ասաց. - Կընիկ, ի՞նչ անգըջկլուա, Աստղված պարին կա-
տարա:

Ասաց. - Սերոփն էկավ մը ծի, ասաց՝ քնն՝ իմ խորն ասա, թը
խըլըսուն Մարգրիտ պսակա վըր ընծի:

Համա էնտեղեն Պետրոս ուրախելին էլավ, քննց, պըռնեց
Սերոփի էրես պագեց: Խըլըսուն էլան, խարսընքի թնդարուք
տեսան, յոթն օր խարսնիք էրեցին, Սերոփ պսակեցին:

Սերոփն ու Մարգրիտ խասան ուրանց մուրազին, դուք էլ
խասիք ձեր մուրազին:

Աստղծուց իճավ իրեք խընծոր, մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին,
մեկ՝ էլա քուլլի ջաղամաթին:

